

ինչ չկարէր, թէև զաշխարհ բովանդակէր ի գրել, այսինքն է՝ զօր եւ զժամ վերջին կենացն. ուստի եւ զայն մեք գրեցաք առ ի չլինել եւ յայնմանէ անձանթ՝ որ միանգամ ընթեւնուն զայս գիրք, աչաց որոց տացէ Տէր լուսաւորութիւն: Ե[սայի] Ա[բեղայ]»(*): Անդ. «Ման եղիազար կաթողիկոսի էջմիածին Ռձի» (= 1691) Օգոստոս ժլ»:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. — **Օրագրութիւն**, որ կը սկսի Ռձիթ (= 1680) Հոկտեմբեր 8ին ու կը հասնի մինչև ՌձիԳ (= 1704) Յունիս 3, անընդմիջաբար: Կ'ընդմիջուի միայն երկու տեղ. մէկը՝ 1682 Օգոստ. 4 — Սեպտ. 16 և միւսը՝ իր հիւանդութեան պատճառաւ՝ 1703 Դեկտ 8 — 1704 Փետր. 29: Կը բովանդակէ 23 տարուան, 7 ամսուան և 27 օրուան առօրեայ արձանագրութիւններ կամ յուշագրութիւններ: Ամդեցի իր երկար ժամանակ ապրած վայրերը, զլիսաւորաբար Երուսաղէմ, էջմիածին, Կ. Պոլիս ու Եւզոկիա, պատմական կարեւորութիւն ունեցող բազմաթիւ դէպքեր արձանագրած է իր **Օրագրութեան** մէջ, թէև կարճաւուս ու ամփոփ նախադասութեանց մէջ: Կը գնենք **Օրագրութեան** ամփոփումը:

1680 Հոկտ. 8ին կը մեկնի Չնքուշի վանքէն(**) ու հանդիպելով Ջերմուկ, Սեւերէկ, Միզառ՝ նոյն ամսոյ 22ին կը հասնի Հայէպ: **1681** Յունուար 12ին կը մեկնի Հայէպէն ու հանդիպելով Խանթումա, Շամ, Ղօնէյթաւ, Մինա, ձինին, Նապլուս, Չէչմէլի՝ Փետր. 10ին կը մտնէ Երուսաղէմ (Թղ. 1ա-1բ):

Փետր. 10 — Ապրիլ 17 կը մնայ Երուսաղէմ (Թղ. 1բ-3ա):

Ապրիլ 17ին Եղիազար կաթողիկոսի իբրև հետևորդ կը մեկնի Երուսաղէմէն և 24ին՝ Եաֆայէն, ու հանդիպելով Ֆինիքէ, Աղլիսար, Միսատա, Ռատոս, Ըստանքոյ և Սախըզ՝ Յունիս 7ին ամէնքը կը հասնին Իզմիր, ուր կը մնան մինչև Սեպտ. 22 (Թղ. 3ա-4բ):

(*) Ապա պատրիարք Երուսաղէմի. որ իր արեղայ ձեռնադրուելէն (1851) վերջ կարգի կը զնէ մեր Ձեռագրաց Մատենադարանը եւ առաջին անգամ բլլալով կը ցուցակագրէ եւ թուահամարի տակ կ'առնէ ձեռագիր հատորները (տե՛ս իր Ինքնակենսագրութիւնը. **ՍԻՈՆ**, 1938, էջ 45):

(**) Տեղերու անունները գրուած են ընդհանրապէս Ամդեցիի ուղղագրութեան համաձայն: